



# ԾԱԶԻԿ

## ԿԱՆԱՆՑ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՐԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ,  
ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ԿՈՐՈՅԹԻ  
ՋԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ  
ԿԱՆԱՑԻ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՐԵՐՈՒ



ԺԹ. ՏԱՐԻ

Նոր Շրջան, ԹԻՒ ՅՅ



ՅՕԴՈՒԱԾՆԵՐ ՈՒՆԻՆ

ՏԻԿԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ  
ՕՐԻՈՐԴ ԵԻՏՈՔՍԻ ԽՈՒՆԿԵԱՆ  
ՕՐԻՈՐԴ ՄԱԹԻԼՏ ԱՍՏՈՒԱԽԱՏՈՒՐ  
ՕՐԻՈՐԴ ՂԵՐԳԻՆ ԽԵՐԵԱՆ  
ՕՐԻՈՐԴ ՆՈՐԱՆՈՅՇ ԱՅՂԱԶԵԱՆ  
ՕՐԻՈՐԴ ՆԻՆԻ  
ՕՐԻՈՐԴ ՔՐԻՍՏԻՆԷ ՄԵԼԻՔԵԱՆ  
ՕՐԻՈՐԴ ՄԱՌԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԵՎ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌՔ

Գ/ն 40 փարա

Տպագրութիւն ԵԱԴԻԿ, Կալաթա.

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 դրուշ. վեցամսեայ 25<sup>2</sup> դրուշ. :

### ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 դրուշ. վեցամսեայ 27 դրուշ. :

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան 12 ֆրանք :

Ծանուցման, բաժանորդագրութեան եւ թերթին վերաբերող ամէն կարգի գործառնութեանց համար դիմել մի՛ միայն՝

{زاغيك غزتهسى}

درعليه ده غلطه ده قورشونلى خاندۀ نوامرو ۷

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ «Ծ Ա Ղ Ի Կ»

Կ Պոլիս, Ղալաթիա, Դուրչունյուս խան, թիւ 7

JOURNAL "DZAGHIK,"

Constantinople, Galata, Kourchoum Han, N<sup>o</sup> 7.

### Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԺԻՏԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԻԹՈՑ

## ԺԱԼՃԵԱՆ ԵՒ ԹԱՎԺԱՆՃԵԱՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Կ. Պոլիս, Էսկի Զապթիէ ֆասսէսի թիւ 63

Ապրանաց տեսակներու ճոխութեամբ ու չափաւոր գիներով ծախող հանրածանօթ այս հին վաճառատունը Եւրոպական առաջնակարգ գործարանաց հետ միշտ ունեցած յարաբերութեանց շնորհիւ կը գտնուի պատրաստ հաւաքածոյ մը ասեղնագործութեան և օժիտի վերաբերեալ նոր ու ընտիր նիւթերու, ինչպէս մետաքսեայ կերպաներ, աթլաղ, թաւիշ, թաւթա, ոսկեղօծ ու արծաթեայ զուտ ու անզուտ թելեր (խառ եւ խամ սրբմա), ճերմակեղէնի համար ընտիր պոստէներ, վալանսիէն ու մետաքսէ թանթէլաներ, ճեմակքըթան, գաղղիական ընտիր չապիկի կերպաններ, բիքէներ, գունաւոր պաթիսթներ եւայլն եւայլն:

Զետագործ բանուած ու սկսուած զանազան ճոխ նիւթոց հաւաքածոյ մը պատրաստ կը գտնուի:

Կ. Պոլսոյ եւ Դաւառաց զպրոցական հաստատութեանց համար մասնաւոր զեղչ կ'ըլլայ:

Վաճառատան մէջ կը գտնուի միշտ պատրաստ ասեղնագործի գծագրիչ մը:



# ՇԱՀԻԿ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

(619) ԺԸ. ՏՍՐԻ — ԹԻԻ 35

4 ՄԱՅԻՍ 1906

## ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ



ՆՎԻՆՆՈՒՐ վաճառք մը կ'ընծիւղի տակաւ, միակողմանի կրթութիւն մը տալու հետզհետէ հասունցող էգ սերունդին. լնդհանուր վաճառք մը՝ որ կը ձգտի զանոնք պարիակել դաստիարակութեան անախկ բովի մը մէջ, որմէ զուրս զան միմիայն մայր ըլլալու համար:

Երկրորդական կամ բարձրագոյն կրթութեան մասին հեղինակութիւններու կարծիքները ո՛րչափ որ զանազանին իրարմէ, ա՛յնչափ ալ ջուրի գոյն մը կ'առնեն կրթական գործունէութիւնները, որոնց օրինակը տեսած ենք մինչեւ պարզ:

Մէկը՝ չափազանց բարձրախիչ իր մտաւոր ճախրանքներուն մէջ՝ աղջկանց կրթութեան սահմանը կը նոյնացնէ արանց յատուկ եղող նկարագրական մարզանքի մը հետ, ուրիշ մը՝ նուազ աշխատէր ու պահանջկոտ աւանդամոյլի բարքերու՝ բաւական կը համարի զանոնք պահել հոն ուր որ են. երրորդ մը՝ նորութիւն կը համարի անտեսագէտ տեսնել բոլոր աղջիկները: Այս խառնիխառն սկզբունքներուն միաձուլ յորձանքը՝ անկայուն եւ յեղեղուկ ջիղ մը կը դնէ կրթական ամէնէն գիտակից շարժումներուն մէջն իսկ, որ ո՛չ միայն անհանգիստ կ'ընէ կրթութեան տուիչները, այլեւ անոնք՝ որ պաշտօն ունին պատուաւալ հակալիւր ըլլալու այդ աշխատաւորներուն:

Բայց ինչ որ կամաց կամաց տարտամ ու արագ քայլ մը կ'առնէ աղջիկներու դաստիարակութեան սահմանէն ներս, զանոնք

միայն տանտիկին դարձնելու ջանքն է, և անոնց տրուած բոլոր ուսումներուն որակը կ'ուղղուի պատշաճեցնել լոկ այդ խաչալին: Չենք գիտեր թէ կրթական ծնելիք ծրագրերը ի՞նչ անակնկալներ ունի մեզի պարզելիք աղջիկներու կրթութեան համար. զանաւոր պիտի սահմանափակէ՞ իրենց տուներու գիտութեանց մէջ, թէ ընդհակառակը պիտի ճոխացնէ անոնց ծրագրերը. և որովհետեւ տակաւին գաղափար չունինք, այդ մասին կարծիք տալը բոլորովին կանխահաս է դեռ:

Ամէն պարագայի մէջ սակայն, Ուսումն. Խորհուրդը գէշ բան մը չպիտի ծնի, կը հաւատանք մենք. որովհետեւ անբաւական գլխաւ նախկինը, հետեւաբար ճոխացուց դայն, օժտելով նորագոյն և կարեւոր ուսմանց ճիւղերով, որոնց նպատակը չպիտի ըլլայ սոսկ աղջիկ վաւկի մը մայր ըլլալու սկզբունքները տալ, ինչպէս կ'ընեն եւրոպական կարգ մը յետամնաց թաղերու մէջ, և որոնց սակայն մեզ կը սքանչացնեն Պ. Կիւսթավ Ժէֆրուաներ, լոկ որ և իցէ հաստատութեան մը նկատմամբ գովեստ մը գրած ըլլալու համար:

Կրթական ուղղութիւնը նոյնն է երկու սեռերու համար ալ. եթէ երկու սեռերն ալ իրենց յատուկ բնազդներէն մերկացնենք, երկուքն ալ մարդ են, երկուքն ալ նոյն: Ողջամիտ կրթողի մը համար զանազանութիւն չի վերցներ մանչ կամ աղջիկ մը դաստիարակելու պարագան, սա տարբերութեամբ որ կին մը միշտ կին է իր բնազդովը, և այդ մը միշտ այդ՝ իր բնազդով: Կին մը հաւասարապէս կրնայ օգտուիլ այն բոլոր բարձրագոյն ուսումներէն, որոնք իր մտաւոր հարստութիւնը պիտի կազմեն, և որմէ կախում ունի ապագայ առանին կենցաղի անդորրութիւն մըն ալ. վստահ երկրորդական ուսումներով անո՞՞ք մը չի կրնար հանդարտ կեանք ունենալ ռամիկ կնոջ մը հետ, ինչպէս կ'ըլլայ կին մը այս գարուն մէջ, որ բարի անասագէտ մըն է միայն. այս տեսակ կնոջ մը նախակրթարանական գիտելիքն իսկ անբաւական է: Դնտանեկան երգիքին հեղասահ օրերը լոկ նիւթական կացութեան և բարի տրամադրութիւններու չեն կարօտիր. պէտք է, և անհրաժեշտաբար, որ ամուսնացող աղջկան մը մաքի զարգացումը խաչաձեւէ իր կէսին հետ իսկ և իսկ, որպէս զի յառաջ գայ նախ ամուսնական և ապա ընտանեկան ներդաշնակութիւնը:

Այս չէ՞, որուն կը ձգտին արդէն դպրոցական կամ կրթական ամէն ուղղութիւններն ալ:

Ներդաշնակութիւն, միշտ ներդաշնակութիւն սեռերու մէջ, որոնք կոչուած են արդէն զիրար յրացնելու:

Կը սխալին ամէն անոնք որ կը կարծեն թէ կնոջ մը, տանտիկնութիւն, առանին առաքինութիւններ սովորեցնելով է որ միայն



կարելի է յառաջ բերել կեանքի այս քաղցր եղանակը . մինչդեռ աղ-  
ջըկան մը միտքը պէտք է ստանայ այն բոլոր ուսումները , որոնցմէ  
չստը մեր մանչերուն վերադաշնած է այսօր , դպրոցներու մէջ :

Կին մը միշտ կին է արդէն , ինչպէս այր մը միշտ այր և տըր-  
ուելիք կրթութիւն մը անոնց բնազդները չայլափոխելու բնա՛ւ : Ի՞նչ  
հարկ ուրեմն զանոնք անապատայնել աւելի օգտակար ծանօթու-  
թիւններէ , կրթալ միւրճութեամբ համար մէջը չարք մը սկզբունքնե-  
րու , որոնք աւելի անստոյգ կը դարձնեն կինը իր գերին մէջ :

Բնութիւնն է իւրաքանչիւր սեռի բնազդներու վարժապետը :

ՀԱՅԿԱՆՈՅԷ ՄԱՌՔ

### ԱՆՏԵՂԻ ՔՆՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԻ ԱՌԹԻՒ

Անցեալ օր կարդալով Պատ . հանդէսիդ Ձերօրդ թուոյն մէջ  
Տիկին Ռօզ Գոլոյմանի մէկ քանի դիտողութիւնները գաւառի  
կին ուսանողութեան հանդէպ , արդար նախանձախնդրութիւն մը  
զգացի այդ նախապաշարումին դէմ , զոր Պոլսեցի դրողներէ շա-  
տեր առիթը չեն փախցըներ մեր երեսին տալու , անիրաւարար կամ  
անգիտակցաբար , որը որ կ'ուզէք :

Յարգելի յօգուածագիր տիկինը սակայն աւելի փափկանկա-  
տութեամբ էր յայտնած իր կարծիքը՝ թէ գաւառացիք «աւելի  
գրական կերպով» կը մեծնան . և նուրբ հեղինակեամբ մը համե-  
մելով իր տղերը , զանոնք սահմանափակած էր միայն ծուլու-  
թեան և չա՛տ չա՛տ կարի , ձեւի և ձեռագործի նախասիրութեանց  
մէջ , հեռու ուսմանց հակումներէ :

Ներուի սակայն հարցնել թէ արդեօք յօգուածագիր տիկինը ի՞ր  
գաղափարն է որ կը յայտնէ , այդ գրութեան մէջ , թէ գաւառա-  
ցիին գաղափարը . չեմ կրցած հասկնալ այդ : Եւ ձեռագործի աւելի  
կարեւորութիւն տալով՝ միթէ գրական կրնայ ըլլալ մարդ , մնաց  
որ մե՛նք , գաւառացիքս ալ գիտենք և կը գնահատենք ուսումը  
ընդհանրապէս , և մեր աղջկանց վարժարաններու մէջ մասնաւորա-  
պէս , վասն զի ատով է որ պիտի զարգանան մեր ապագայ սե-  
րունդները :

Իսկ , մեր մէկ քանի փոքր քոյրերուն ծոյլ ըլլալը խնդրական  
չէ ամենեւին և ոչ ալ ընդհանուր յատկանիշ մը : Ես թէ՛ Պօլիս  
աշակերտած եմ և թէ՛ գաւառներու մէջ , և այս երկու տեղերն ալ  
հաւասարապէս տեսած եմ թէ՛ ծոյլեր և թէ՛ աշխատասէրներ . միև-  
նոյն ատեն , ստէպ այցելելով նաեւ մեր գաւառի վարժարանները  
սա համոզումը գոյացուցած եմ որ աղջիկները մանչերէն աւելի  
լաւ դաս կը ստորաւստեն :

Գալով ձեռագործի մասին, կան վարժարաններ, որ չաքաթը հաղիւ երկու անգամ մըլցց կը արուի, իսկ մնացեալ ժամանակը ուսման և ութիւններու կը յատկացուի: Ասկայն, եթէ երբեմն գաւառացի աղջիկը զուրկ կը մնայ ուսմանը, աւելի քան պոլսեցուհին, ատոր գլխաւոր պատճառը պաշտօնին անդիտակից և տկար ուսուցանողներու գոյութիւնն է: Անոնցմէ անոնք որ տկար են որ և իցէ ութիւններու, վրանին չեն առնիր և «Աղջկան մը համար աւելորդ է այս գասը, հիմայ ա՛լ այդպիսի դասեր չեն աւանդուիր» կ'ըսեն ու իրենց գլխուն կը վերցնեն զանոնք: Կարող ենքն ալ կամ չառ անգամ ո՛ր և իցէ հիւանդութեան պատրուակաւ բացակայ կ'ըլլան. կան ալ որ օղայլին ուսուցիկ և թուուցիկ խօսքերով մեզ կը շլայնեն, և խեղճ աշակերտուհիներն ալ անոնց թեթեւ մանրանկարները դարձած՝ առանց բան մը սորվելու վերջապէս, դուրս կուգան վարժարանէն: Ծնողաց չատերուն աղջկին վարժարանէն հանկուտ պատճառը ասոնք են ահա. անոնք տեսնելով որ այսպիսի թեթեւօղիկ մը արդիւնք յուսալ խելք չէ՝ աւելի լաւ կը համարին աղջկինին իրենց քովը առնել: Ոմանց ալ նիւթականը խիստ համեստ ըլլալուն և տեսնելով որ իրենց զաւակը ալ աւելի ուրիշ արուեստի մը յարմարութիւն ունի, կուտան արուեստի: Կան չատեր ալ որ ցամաք հաց կ'ուտեն և կ'աշխատին ու իրենց զաւակը չեն զրկիր վարժարանէն: Նոյն իսկ որբուայրի՝ զաւակներու տէր մայրերու՝ վարժարան մանկնին տեսած եմ, որպէս զի բան մը սորվին և աղաքային հողատար ըլլան իրենց զաւակներուն:

Յարգելի յօգուածագիր տիկինը կ'աւարիէ նաեւ թէ գաւառներու մէջ չափահաս աղջիկներ ոչ վարժարան կ'երթան և ոչ եկեղեցի. թերեւս այդպէս ըլլայ, միայն... իր գանուած տեղերը, ինչու որ սրիչ տեղեր ընդհակառակը, այդ աւանդական նախախաղաշարունները ծխած են ա՛լ: Վերջապէս, յուսուսութեամբ մը կ'ըսէ յարգելի տիկինը՝ թէ գաւառի մայրերը չեն զգուշացներ իրենց զաւակները, սակայն չի յիշեր թէ ի՞նչ բանէ չեն զգուշացնէր, մինչդեռ վերը, գաւառի աղջիկներուն ամէկուսու թիւնը կը շեշտէ, ինչ որ մեծ փառս մըն է մայրերու նախանձախնդրութեան: Ես կը հաստատեմ որ գաւառի մայրերը ամէնէն աւելի զգոյշ են զատկ մեծցունելու մասին և կը խնամեն աղջիկ մը այնպէս ինչպէս հաւմը որ կը պահէ իր ձաղերը թեւերուն տակ, զուրկութեան ինամատարութեամբ և պատրուտ սպասնալու ամէն անոնց, որ պիտի յանդգնին խեղաթիւրել անոնց բարոյական անդորրութիւնը:

Սամսոն

ՎԵՐԳԻՆ ԽԵՐԵԱՆ



# ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԼ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Մ. Ա. Ս.

## ԿԻՆ ԱՌՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

— 333 —

### ՊԼՈՒԽ ԵՐԲՈՐՊ

#### ՏԱՐԻՔՆ ՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Հեղինակ ԲՕԼ ՄԱՆԹԷԿԱՅՅԱ

Մարդաբանութեան ուսուցիչ եւ անդամ Իսախոյ ծերակոյսին

Որպէս զի այդ կարգի ամուսնութիւնները երջանկաբեր ըլլան, պէտք է որ ամէն բանէ առաջ, այս եւ կին սրտառաւիտիկը անձեր ըլլան, անկեղծօրէն ընդունին կնքուած պայմանադրութիւնը, առանց լռանցումներու եւ ընդդիմութեան, ընդունելով պարագը եւ գոհանալով եղած պահանջքով:

Ծեր մարդը, ամուսնական այսն ձեռք բերելէ առաջ, պարտի իր հաշուեկշիւը ներկայացնել, պարտքին դումարը չտալու հանգիստով եւ պահանջէն նուազեցնելով, վերջապէս պարտաւոր է յատակ, որոշ բացատրութիւններ տալ ու ամէն ինչ պարզել բացայայտօրէն:

Կը յիշեմ ընտանեկան ստակալի դժբաղդութեան պարագայ մը՝ որուն ենթարկուեցաւ մարդուն մէկը, զանց բրած ըլլալուն համար քիչ մը վերը ըսածու:

Հարուստ ու հռչակաւոր մարքիզ մը, ուղեւոր իր ծերութիւնը պսակել ամուսնական վարդերով, իբր կին բնորեց նորոտի աղջիկ մը գեղեցիկ ու թարմ արեղական հառադայթի մը պէս. նաեւ անբիծ՝ սիրոյ կեանքին բոլորովին անտեղեակ ըլլալու աստիճան: Մարքիզը յայտարարեց թէ նորոտի աղջիկը իր մէջ պիտի գտնէր եղբայրը եւ թէ պէտք չէր սպասեր հեշտութեան հաճոյքները: Սիրալիք բարեկամութեամբ մը կը շրջապատէր կինը, բարեկեցութեան ընձեռած բոլոր հաճոյքներով կը զեղուր զանի, բայց այդ մարքիզը երբէք էրիկ մարդ մը չէր եղած բառին բուն իմաստով, ո՛չ իսկ երիտասարդութեան ասեւ. ու այդ բանը ամէն ոք գիտէր:

Նորաւի աղջիկը ընդունեց ամէն ինչ՝ առանց բան մը հասկնալու: Առաջին ամիսները երջանիկ անցան: Բայց երիտասարդ մը, հաճոյակատար ու խիղախ, յանձն առաւ մարքիզուհին սորվեցը

նելու ամուսնութեան անձանօթը, և իր դասը այնքան լաւ սորվեցուց որ դաւակ մը աշխարհ եկաւ

Ամուսինը վեհանձն գտնուեցաւ և իր կնոջ ներեց, յանցաւոր նկատելով ինքզինքը, այսպէս տղան իր ժառանգորդը ըրաւ, առանց կարենալու իր անունը ապա անոր, քանի որ ամուսնական անձանօթը լուծելու մասին իր ունեցած անկարողութիւնը յայտնի էր ամէնուն: Ներումը այնքան անկեղծ ու վեհանձն եղաւ որ առաջին զաւկին յաջորդեց երկրորդ մը: Թէ մարքիզը երջանիկ եղա՞ւ ու չզղջա՞ց իր կնքած ամուսնութեան վրայ՝ չեմ համարձակիր հաւաստել այդ կէտը:

Ուստի կ'ամփոփեմ ըսածներս: Երբ ձեր խօսեցեալին ներկայացնէք ձեր հաշուեկշիռը, ջանացէք ամէն ինչ բացայայտ պարզել:

\* \* \*

Վերեւ քննուած ամուսնութիւնները նախապէս ենթադրուածէն շատ աւելի յաճախաբէպ են, և երջանիկ պարագաները ո՛չ այնքան հազուադէպ, որքան կը կարծուի տեսականօրէն, որովհետեւ կինը սիրոյ մէջ այրերէն շատ աւելի տեսլապաշտ է և բարձր կարգի ուրիշ տարրեր կը փնտռէ ամուսնութեան մէջ, գնահատելով զանոնք արուեստագէտի սրտով ու բանաստեղծի երեւակայութեամբ, մինչ այրերը ամէն բանէ առաջ գեղեցկութեան և հեշտութեան հետամուտ են:

Էրիկ մարդու մը սէրը երեւելի այլ տգեղ կնոջ մը նկատմամբ՝ ձերմակ ճանձի պէս հազուագիւտ բան մըն է: Բայց մանկամարդ կնոջ մը սէրը սովորականեր այլ մեծ մարդու մը նկատմամբ՝ բաւական յաճախաբէպ է և կնոջական սեռին պատիւ կը բերէ:

Այրը ուրիշ բաներ կ'ընծայէ իր կնոջ, հարստութիւն, ընկերական բարձր դիրք, փառասիրութեան մեծ գոհացում, վերջապէս բարձր, բարի ու քաղցր բաներու ամբողջ աշխարհ մը. այդ ամէնը իր կնոջ ոտքերուն առջեւ կը դնէ ան: Ու այս ամէնուն փոխարէն քիչ մը սէր կ'ակնկալէ կնոջմէն:

Բայց այնպիսի տկնկալութիւններ կան, որոնք սիրոյ դրոշմ կրելէ աւելի առուտորի հանգամանք ունին, և արդէն նուիրական գիրքերը, առանց քաշուելու կոչած են պարզ առուտոր:

Սակայն ինչո՞ւ համար քիչ մը առուտորական ոգի չգտնուի ամուսնութեան մէջ, պայմանաւ որ նոյնը շատ մէկ-կողմ չծռի և կռողը ազնիւ մարդ ըլլայ, այն ատեն կ'ապահովուի ամուսնական երջանկութիւնը:

Երբ էրիկ մարդ մը իրմէ շատ աւելի երիտասարդ կնոջ մը հետ ամուսնանայ, ռամիկը չարամտօրէն կը ժպտի և երկու մասները



կ'երկարէ՝ գէշ աչքէ պահպանելու կամ յանդուգն էրկան ցոյց տալու համար թէ Մինօթօր դարանակալ կը սպասէ :

Այսպէս ռամիկը ո՛չ թէ մէկ այլ հարկուր գորդեան հանգոյց մէկ անգամէն կը կարէ , թուրի անմտօրէն բիրտ հարուած մը տալով :

Իրաւ է որ մանկամարդ կիներ յեղակարծօրէն կրնայ սորվիլ այն բանը՝ որուն շատ ուշ իրազեկ եղաւ մարքիզուհին , իր կեանքի ընկերոջ ծերութեան մէջ գտնելով գործած կամ գործելիք մեղքերուն արդարացումը : Բայց ձեռքերնիդ խղճերնուդ վրայ դնելով , ձեր շուրջը դիտեցէ՛ք և ըսէ՛ք թէ անհամաձայնութիւններ չե՞ն ծագիր նաև երկուսարգներու միջեւ կնքուած ամուսնութեանց առթիւ :

Անհամաձայնութիւնները ամէն բնական կան յարկերու մէջ կը սլատահին , բայց ամէնէն աւելի հոն՝ ուր կը պակսի կնոջ յարգանքը հանդէպ իր ամուսնոյն . արդէն ամէնէն աւելի ճարտար սերմանիչներն ու մշակները՝ անհամաձայնութիւններ բուսցնելու մասին՝ է֊րկիներն են :

Այս իրողութեան վրայ այնքան խոր համոզում գոյացուցած եմ որ եթէ կարելի ըլլար ամուսնական վնասներու մասին վիճակագրութիւն մը պատրարտել , ամէնէն աւելի երկուսարգ ամուսինները տուժող պիտի գտնենք , որովհետև անոնք ալ գնման ու վաճառման պայմանագիրներ կը կնքեն . դրամի ու տիտղոսի փոխանակութիւններ կը կատարեն ամուսնացած ատեններն :

Եթէ երբեք , սպիտակահեր ըլլալով հանդերձ , քաջութիւն ու նենաք մանկամարդ կնոջ մը հետ ամուսնանալու , ամէն բանէ առաջ ուսումնասիրեցէ՛ք անոր նկարագիրը : Եթէ ասպետական նկարագիր մը ունի , նուազ անհաւատարիմ պիտի գտնուի , մինչ աւելի դիւրաւ պիտի խաբէր՝ երբ երկուսարգ ըլլայիք : Պատճառը սա է որ ինքզինքը հպարտ կը զգայ՝ կամաւորապէս անձնատուր եղած ըլլալուն համար , և չպիտի ուղէ այնպիսի մեղք մը գործել՝ որուն հանդէպ շատ ներողամիտ պիտի գտնուի ամէն մարդ : Նաև սա պատճառն ալ կայ որ կիները կ'ախորժին դժուարին բաներէն և սիրային արարքներէն . այդպիսի կին մը հաճոյք պիտի զգայ մտովի ըսելու կամ զինքը հրապուրող մարդուն երեսն ի վեր գոչելու , ազնուականութիւնը իր պարսփերը ունի :

\* \* \*

Եզրակացնենք ուրեմն : Եթէ քաջութիւն ունիք ձեր սպիտակ մազերը հիւսկելու խարտեաչ կամ թուխ մազերու հետ՝ երկուսարգութեամբ բուրումնաւէտ , ձեր սննդակին հայելիին մէջ նայեցէ՛ք և երկարօրէն քննեցէ՛ք ինքզինքնիդ : Աւելի յամրաբար մերկացէ՛ք

ձեր խղճի հայելին առջև, որ անողոք կերպով պիտի դատէ ձեզ : Հաշուելիւր պատրաստելէ յետոյ ձեր ֆիզիքական «եա»ին ինչպէս նաև ձեր լարոյական ու մտաւորական «եա»ին, լաւ մը քննեցէք իւրն ու մուտքը, հասկնալու համար թէ ամուսնական կեանքի յարմար, գեղեցիկ ու առոյգ մարդ մըն էք : Եւ եթէ հանդիպիք երիտասարդ կնոջ մը, որ խաթուն ըլլալէ աւելի հրեշտակ ըլլայ և աւելի խաթուն՝ քան թէ կին, առանց խղճահարութեան ու կեղծ վերապահութեան, կրնաք ամուսնանալ այդպիսի կնոջ մը հետ : Մեռած ատեննիդ կրնաք ըսել անոր. «Կեանքիս վերջին տարինս չը երջանիկ անցան : Երիտասարդութեան միջոցիս շուայա կեանք մը վտայեցի : Իսկ ծերութեանս մէջ կրնա տեսեցայ միայն, կրնա որ յամբողջ հաճոյքներս կ'արժէր : Կեանքիս օրհնութիւնը եղած է կրնը :»

\* \* \*

Այրր՝ երիտասարդ եւ կինը՝ ծեր :

Էրկան ու կնոջ միջեւ զանաւոր տարբեր անհամեմատութիւնները պէտք է որ զարմանք ազդեն, և ո՛չ ալ երիտասարդ էրիկ մարդու մը և ծեր կնոջ մը միջեւ կնքուած ամուսնութիւնները :

Մեր արհամարհանքին խորը կը հանգչի մեծ ճշմարտութեան մը սերմը, որ իր արմատները կը խորասուզէ բնութեան ընդերքներուն մէջ իսկ :

Էրիկ մարդ մը կրնայ ութսուննոց ըլլալ և ժպտազին մտիկ ընել կնոջ սա դանդաղութեամբ տմուկնը շատ խիստ է, թէև եօթանասունը անցած ըլլայ : Սակայն ամէն ոք կը յիշէ թէ Ֆոն-Թընէյ ու Ռիչլիօ զուգորդ միջեւ իրենց կեանքին վերջը պահեցին անախտ կարողութիւններն, թէև մէկը հարիւր տարեկանին հասած ըլլար, իսկ միւսը՝ եօթանասունը անցնելէ յետոյ մեռած ըլլար :

Կին մը, ընդհակառակը, քառասունը հինգ, առաւառելն յիսուն տարեկանէն անդին, կին չէ այլևս, ու սերնդադորձելու կարողութիւնը կը կորսնցնէ : Հետեւաբար, երիտասարդի մը ամուսնութիւնը պառաւ կնոջ մը հետ՝ շատ աւելի հակառակ է բնութեան, քան թէ մանկամարդ կնոջ մը և ծեր մարդու մը միջեւ կնքուած ամուսնութիւն մը : Այս վերջին ամուսնութիւնը կրնայ բեղմնաւորուիլ, բայց առաջինը՝ ոչ : Ատոր վրայ աւելցուցէք էրիկ մարդուն գեղեցիկաբերական պահանջումները, կնոջ դահավէժ անկումը՝ որոշեալ տարիքէ մը յետոյ, իսկոյն պիտի ըմբռնէք թէ երիտասարդի մը և ծեր կնոջ մը միջեւ կնքուած ամուսնութիւնը ամէն բանէ աւելի դարչելի ու խորչելի է :



Այս պարագային՝ այրն ու կինը առաջնորդող շարժառիթները չառ դձուճ բաներ են և կը վերաւորեն մարդկային խիղճը :

Մէկ կողմէն իբր շարժառիթ կայ տալիք , միւս կողմէ՝ ոսկիի ծարաւը , որով էրիկ մարդը տեսակ մը անբարոյութիւն գործած կ'ըլլայ . սիրային յարաբերութեանց ամէնէն նողկալի ձեւն է ատիկա :

Երեւակայեցէք էրիկ մարդ մը որ իր երիտասարդութիւնը ու առնականութիւնը կը ծախէ . երեւակայեցէք նաև կին մը՝ որ սիրոյ իրաւունք չունենալով հանդերձ՝ ապրանքի մը պէս կը գնէ և կը դոճանայ մարդու մը ընծայած հեշտութեամբ , մինչ ամէնէն աշուշի ինք պէտք է արհամարհէր այդպիսի մէկը : Յովութեան ամօթալի սակարկութիւն մըն է ատիկա : Տղմին մէջէն առնուած ոսկի մըն է , բայց այնպիսի սիղմի մը՝ ուրկէ չի կրնար մաքրուիլ մարդ . ան կ'արատաւորէ ձեռքերն ու խիղճը , վերջապէս ի՞նչ բանի որ դպչի :

Սակայն , ի պատիւ մարդկութեան , այդ կարգի ամուսնութիւններ չառ հազուադէպ են . եղածներն ալ թաքուն հանգամանք ունին և ամօթը կը պարտկուի արդի կեղծաւորութեան թանձր վարագոյրներուն տակ :

Սիրահար՝ այո՛ , ամուսին՝ ո՛չ :

Կինը գրեթէ միշտ փախաքող է ամուսնանալու , որովհետև մնաւարժութենէ դրդուած՝ կ'ուզէ աշխարհի տուջև հռչակել թէ հակառակ լեցուն տարիքին , դէմքի բազմաթիւ խորշոմներուն , ու մարմնական բարեձեւութիւնը բոլորովին կորսնցուցած ըլլալուն , լաւագոյն ընկերակից մը յաջողած է գտնուլ՝ կարող զինքը երջանկացնելու :

Էրիկ մարդը , ընդհակառակը , կ'ուզէ ծածկել իր արարքը , ամօթխածութեան զգացումէ մը մղուած , որ ամէնէն դձուճ ոճրագործներուն մէջ իսկ կը տեսնուի : Թաքուն և ապօրէն յարաբերութեան մը աղջամուղջին մէջ պիտի ուղեն պարտկել իրենց ամօթը , յուսալով թէ մարդոց յարգանքին պիտի արժանանան միշտ , սուանց կորսնցնելու իրենց վատկած գրամը , որ ամօթի կարմիրը առաջ պիտի բերէ դէմքերնուն վրայ :

Աւելի չեմ ծանրանար այս մասին , որովհետև չեմ յուսար թէ պառաւ կիներու երիտասարդ ամուսինները կարդան այս գիրքը , զոր պիտի աղտոտէին իրենց անմաքուր ձեռքերով . նաև կը սիրեմ յուսալ թէ այդ կարգի ամուսիններ անուս են բոլորովին :

(Շարունակելի)

ՄԱԹԻՆՏ ԱՍՏՈՒՐԵԱՏՈՒՐ

## ՎԱՂԱՄԵՌԻԿ ՍԻՐԱՍՈՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՆԳԻՆԷԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Օրիորդ .

Դո՛ւ որ օգնութեան կը հասնէիր, կը մոնէիր ո՛չ միայն մայրիկիդ անական գործերուն, ո՛չ միայն ընկերուհիներուդ, այլ և այն բոլոր ծանօթ դրացիներուդ, որոնք անկարող էին միայնակ ի յանգ հանել իրենց առանին գործերն :

Ալեւորուհիներուն նեցուկն էիր : Հիւանդներուն՝ սիրտիչը . աղքատներուն մխիթարութիւնը :

Ո՛չ մէկէն չա՛ մը կը սպասէիր, և ո՛չ միւսէն ակնկալութիւն մը ունէիր : Բոլոր խոնջանքդ կը մոռնայիր, երբ օրհնութեան միջանի մրմունջներ լսէիր քու այնքան ճիգերուդ և աշխատութեանցդ փոխարէն :

Թաղին ամենազգի էդ համայնքն քեզ կը սիրէին սրտանց, և ամէնուն համակրանքը առ քեզ քաշած էիր :

Բարի և ազնիւ անունդ ու հռչակդ՝ արդէն արձագանք գտած էր մինչեւ Նեղոսի ափունքը, և հազիւ տասնեւեօթը դարուններ հոլոված, փափաքեցան որ զքեզ իրենց մէջ հարս ունենան : Ուստի փութացին ձեռքդ խնդրել, և քու ծնողքդ՝ հաւանեցան : Մէկ բառով, նշանեցին զքեզ, և նշանուող ուրախութեամբ իմացանք :

Աւետալուրդ՝ ո՛րքան ուրախաւիթ, սակայն այնքան այ յուզիչ եղաւ :

Ուրախութիւնով և տրամութիւնով միանգամայն վարակուեցան ու համակուեցան մեր սրտերը, որովհետեւ պիտի բաժնուէիր մենէ : Մե՛նք, որ զքեզ այնքան գուրգուրանօք և խանդաղատօքին կը սիրէինք :

Բայց դուն ալ ալեծուփ վիճակի մը մատնուած էիր :

Աջդ կարկառած էիր Վոսփորէն Նեղոս, և կը խորհէիր թէ՛ այնքան բաղմամբիւ համակիր դրացուհիներէ, սիրելի ընկերուհիներէ, և հօրամոյն ու մօրամոյն գուրգուրանօք և աղապատանքէ ինչպէս պիտի բաժնուէիր, հրաժարուէիր .

Սիրելի և իմաստունհի Անդինէս, անունդ իսկ կը մատնանշէր ներքին ետդ : Անդին էիր : Այս պատճառաւ՝ քու ներկայութիւնդ, ամէն բան կ'արժէր : Չէին խնդրեր քեռէ՛ ո՛չ օփոտ և ո՛չ դրամօժիտ : Սակայն այս կէտը չէր շահագրգռեր աղջիկներուն բնական



նախանձը, տենդոտ հետաքրքրութիւնը, վասն զի կ'ըսէին, Անգի-  
նէն՝ ամէն բանէ վեր է :

Կորովի՛, գեղեցիկ և բարի՛ :

Բայց դողցես բնութիւնը նախանձեցաւ : Աղիքներուդ կարգն  
խանգարեց : Սակայն քեզ դարմանող մասնագէտ բժիշկներն ըսին,  
արդի վիրաբուժութիւնը՝ հիւանդութեանդ դարմանը գտած է :  
Ազգ. Հիւանդանոց փոխադրուեցար իսկոյն : Բայց աւա՛ղ, հո՛ն  
հատու գործիքներ, սուր զանակներ՝ մարմինդ անդամահատեցին,  
կտրեցին և յանձնեցին եկեղեցւոյն, որ մահերգն կարդայ անարիդ  
վրան, և յետոյ մարմինդ հողին յանձնեն : Այս է եղեր սեւ ճա-  
կատագիրդ՝ սիրելի անգին Անգինէ :

Այո՛, հարսենական քողով ծածկեցին երեսդ, և սպիտակափառ  
շուշաններով սընեցին, վարդարեցին շուշանափայլ ճակատդ : Պսակի  
սպիտակ հանդերձներով զգեստաւորեցին և հանգչեցուցին զքեզ  
դադաղին մէջ :

Ա՛յն, ամբողջ Սամաթիա՝ ականատես եղաւ մատաղատի հար-  
սընցուի մը յուզարկաւորութեան թափորին : Ամէնուն սիրտը խոց-  
ուեցաւ, դաշունահար եղաւ ի տես այդ լուսապատկերին : Ամէնքն  
ալ կերկերածայն լացին, ողբացին, և դառն արցունքի չիթերով  
թրջեցին քու անուշիկ դէմքդ :

Յուզարկաւորութեանդ թափորը չըջապատած էին ո՛չ միայն  
ընտանիքիդ անդամները այլ և քեզ համակիր ու սգակիր ստուա-  
րախումբ մը Հայ և օտարազգի պատուաւոր անձնաւորութեանց,  
որոնք լուռ ու մունձ գլխահակ կը հետեւէին, առանց մխիթարական  
բառ մը գտնելու՝ զիրար սփոփելու համար :

Եւ արդարեւ պարագաներ ու վայրկեաններ կան, ուր մեծա-  
հատոր բառադրերու որոշեալ բառերն իսկ չ'են դարեր մխիթարելու  
որդեկորոյս ծնողները, քոյրակորոյս եղբայրները, ազգականները,  
բարեկամուհիները, ինչպէս այս տխուր պարագայիս մէջ :

Անմոռաց Անգինէն : Մենք չէինք ուզեր որ մենէ հեռանաս.  
բայց դո՛ւ յաւիտենապէս բաժնուեցար մենէ : Մենք որ վերստին  
տեսնելու յուսով՝ մեր սրտի ցաւերն կ'ամօքէինք, հիմայ բոլորո-  
վին կորսնցուցած ենք այդ յոյսն ալ. ըսէ՛, ինչո՞վ մխիթարուինք :  
Դէթ կեանքէդ՝ անթարչամ ծաղիկ մ'ալ չե՞ս թողուր, ուրկէ կա-  
րտող առնուի :

Բառ մը միայն ունինք .

«Կամք Տեառն օրհնեալ եղիցի :»

Եթէ այս նախախնամական նախադասութիւնը՝ սփոփանք մը  
չ'առնէ սիրահատորներուդ և մխիթարութիւն չի պատճառէ՞ բարե-

կամուհիներուդ՝ հանդէպ կենացդ անդարձ կորստեան, այն ատեն այս դուզնաքեայ տողերը՝ թո՛ղ իբր անմոռաց յիշատակի անթառամ ծաղիկ մը արձանագրուի կնոջական Մաղիկ հանդէսին մէջ, փոխան ծաղկեփունջի, ի մխիթարութիւն և ի սփոփանս համայն սղակիր համակրուհիներուդ և ինձ:

ՆՈՐԱՆՈՅՇ ԱՅՉԱԶԵԱՆ

## ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ծաղիկները երկար ատեն թարմ պահելու միջոցը:

Գարնան այս աղուոր օրերուն ձեր սենեակները Փշորայի չունչով զովացնել, գիտեմ թէ ամէնքդ ալ կը սիրէք, բայց խնդիր է երկար ատեն անոնց հաճոյքը վայելել, որ կը կայանայ զանոնք չթարչամեցնելու մէջ:

Ուրեմն: Ձեր ծաղկամաններուն դրած ջուրին մէջ ածուխ կը դնէք քիչ մը, և այդ ջուրը ամէն օր կը փոխէք, միշտ ածուխ ձրգուած ջուր մը տալով ամէն անգամ: Նաև երկու օրը անգամ մը անոնց ցողուններէն մէյմէկ քիչ կտրէք:

Դիմի վրայ գտնուող պսկիկները (boutons) անհետացնել:

Յաճախ բարեկամուհիներս կը դանդաւոր իրենց դէմքերուն վրայ երեւցող մորթի տեսակ մը սրկիկներէն, որոնք ազդեղութիւն մը կը բերեն իրենց փափկութեան. միանգամ ընդ միշտ կը խրատեմ զիրենք իրենց երեսները լուալ օրական երեք չորս անգամ թմբիկ (օխլամուր) ջուրով, և կամ լաւ եւս, կէս օխա կաթի մէջ եփ ելած երեք պրատի ձերմակներով. (պրատին ձերմակ մասերը առնել, կտոր կտոր ձեղքել, ապա եռացած կաթին մէջը ձգել որ եփի կէս ժամու չափ:)

Հերքափութեան դիմ

Մազերուն թափիլը արգիլելու համար, թուխերը պէտք է սովորութիւն ըննն գլխուն մորթը աղէկ մը ծեփելու լեմոնի հիւթով, կարելի եղածին չափ զգուշանալով մազերուն վրայ բերելէ այդ հիւթը: Իսկ ուրիշ որ և է դոյնի համար, պէտք է առնել կէս օխա մրուրի ողի (eau de vie de lie) և թէյի մը դգալ աղ զնկ մէջը, նաև մէկ կրա՛մ ֆինիկ. այս խառնուրդով ծեփել զլուխը ամէն անգամ: Արդիւնքը ստոյգ է:

ԲՐԻՍՏԵՆԷ ՄԵԼԻՔԵԱՆ



Արժանի է սակայն հոս յիշել Օր. Մաւին, անձնուրաց և տիպար հիւանդապահուհին, որ սրտովի պլլուած գործին՝ կ'աշխատի անշըշուկ, առաւօտունէ կէս օր, pansementի սենեակը, օգնելով, արտաքին հիւանդութեանց բաժնին օժանդակ բժիշկին որ խիստ բեռնաւորուած ըլլալով հիւանդարանի ծանրածանր գործերովը, չատ պէտք ունի օրիորդին պէս կարող հիւանդապահուհի մը, օրիորդին որ լիովին կը գոհացնէ այս խստապահանջ բժիշկը. աւտով հանդերձ, աղնիւ Տօքթէօրը, չատ լաւ գլտէ գնահատել սըրտով աշխատողները: Կէս օրէ վերջ մինչ երեկոյ բնաւ հանգիստ չունի, անդադար կ'աշխատի:

Կէս օրէ վերջ, ժամը 2 էր, երբ այցելեցի իրեն. տակաւին նոր աւարտած էր գործը ու սուրճ մը կ'առնէր պատառիկ մը հաց թաթխելով, ու... այդ միջոցին մէկը կը կանչէ, lavage պիտի ընէ. գործին տէրն է, ներողութիւն խնդրելով կը մեկնի. կը դառնայ. տասը վայրկեան, նորէն կը մեկնի, գործերը ղինքը կը կանչեն. սակայն այսչափ գործերով բեռնաւորելը անարդարութիւն է, վերջապէս չկրցայ ժամ մը լիովին վայելել ղինքը. թէեւ այնչափ մեծ զարգացում մը չունի, սակայն առողջ դադար փարներով լեցուն գլուխ մը ունի, և իր ճիւղին մէջ բաւական մեծ յաջողութիւն և կարողութիւն. աղնութիւն ըստած վերացական անունը իր վրայ կը մարմնացնէ, երբէք դանդաւտ չի լսուիր բերնէն. համբերութեամբ կը տանի այն լուծը՝ որուն նուիրուած է:

Ահաւասիկ կատրեալ հիւանդապահուհի մը, որուն յարգը չի ձանձնաւով կամ չուղելով ձանձնալ չենք յօժարիր գնահատել, վարձատրել ղինքը ու կը բեռնաւորենք այնչափ՝ որչափ չպիտի կրնայինք կամ համարձակել բեռնաւորել օտարուհի մը: Սակայն մէկ ծագիլով դարուն չի դար: Մէկ հիւանդապահուհիով ամբողջ հիւանդանոց մը չի գոհանար, չատերու պէտք ունինք, ցաւալին այն է որ, այդ տեղը՝ փոխանակ մենք մեղմով լրացնելու, օտարուհիներով պիտի լրացնենք: Արդէն օտարամոլ ժողովուրդ մըն ենք, այս օրինակ պարադաներ ալ չեն պակսիր, աւելցնելու մեր սէրը, մեր տկար հակումները դէպի անոնց, որով մեր մէջ հազուագիւտ կերպով գտնուածներն այ կը մոռնանք, և փոխանակ քաջալերելու խրախուսելու՝ կը մարկնք անոնց եւանդը ու աշխատասիրութեան ջանք, ու կը փարինք օտարներուն:

Միթէ վերը ըստածներուն ապացոյցը չէ՞ այսօրուան մեր տրդայոց դատարարաւորութիւնը օտարներուն յանձնուիլը, որպէս թէ մենք չունենայինք, և նոյնիսկ, մեզ վստահութիւններնչող օտարները դերազանցող դատարարակներ. սակայն օտարամոլ ենք ու պիտի մնանք այսպէս, քանի որ այսօր ալ դժբաղդաբար մեր հիւանդներուն խնամքը պիտի յանձնենք օտարներուն, ցաւ մը՝ որուն պատճառը մենք իսկ ենք:

ԵԻՏՈՒՄԻ ԽՈՒՆԿԵԱՆ

## ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

ՆԻ

### ԱՆԳԼԻՍՅԻ NURSEՆԵՐԸ (Հիւանդապահուհի)

Անցեալ կիրակի օր, զրօսական պտույտ մը կատարելու, և Ապրիլի 'գմբուխտ կանանչութիւններով զգեստաւորուած լեռներուն վայրի հրապոյրները վայելելու համար, առաւօտուն կանուխ, Եէտի Դուլէէն դուրս ելանք. ամենազուարթ խօսակցութեան մը զրադած՝ անզգալարար կը յառաջանայինք զէպի Հիւանդանոց տանող գեղատեսիլ ճամբէն, որ թէպէտ փոշիով ծածկուած, և սակայն չէր նեղեր զմեզ բնաւ իր անախորժ բուրուհմանէսուծով, որովհետեւ շատ կանուխ ըլլալով՝ առտունն ցօղէն սրմբած էր: Մտադիր էինք մինչև Վէյի եփեմնի շարունակել մեր ճամբան, սակայն երբ Հիւանդանոցի անկիւնը հասնելով, տեսանք կիսաւարտ շէնքերը, կորնթարդ զմբէթը Ս. Փրկչեան եկեղեցւոյն, փափաքեցանք ներս մտնել անգամ մը, մօտէն տեսնելու համար այն շէնքերը՝ որոնք բաւական ատենէ ի վեր քննադատութեան առարկայ եղած են ճարտարապետական տեսակէտով, բան մը՝ որ խիստ ցաւալի է արդարեւ. սակայն այս մասը մեզի չի վերաբերիր. քանի որ շինելու կարող են... քակելու ալ կարող են. իրենց գիտնալիք բանն է:

Մտանք Հիւանդանոցի մայր դռունէն ներս. ներքին պարտէզը, հակառակ շինութեանց առթած աղտոտութիւններուն, իր հրապոյրէն բան մը չէր կորսնցուցած, բան մը՝ որ աչալուրջ հսկողութեան մը ցայտուն ապացոյցն է: Վայրի գեղեցիկ շաղանակեանին իր թանձր հովանին փռած էր մայթերուն վրայ և կարծես պարտէզին գեղեցկութեանց հմայիչ լրացուցիչը կը կազմէր. հակառակ հիւանդարանի տխրադեցիկ մթնոլորտին՝ զուարթութիւն և յոյս կը ներշնչէին այդ անուշ և աղնուացած կանանչութիւնները:

Տակաւին կանուխ էր. մինչ առաւօտեան թմրութիւնը կը տիրէր ամէն կողմ, մենք կը չրջէինք նոր շէնքերուն շինութեանց վայրերը, շարունակելով մեր զուարթ խօսակցութիւնը, միանգամայն կարծիքներ փոխանակելով իրարու: Բնական է որ արտաքին երեւոյթը ներքինին որոշ գաղափարը չի կրնար տալ. հետեւաբար կը փափաքէինք աւարտած շէնքին ներսի մասերը տեսնել:

Անցան մէկ երկու ժամեր, այլեւս ոգեւորութիւնը տիրած էր, ամէն ոք իր գործին գլուխն էր. հաստատութեան տնօրէն Համամ-ճեան էֆ. իր արթուն հսկողութեամբը, անձնուէր ու անկեղծ հոգածութեամբը, սրտով փարած գործին, անձամբ կը կատարէր հըս-



կողութիւնը, այցելելով բոլոր յարկաբաժինները և շէնքին գործաւորներուն. հոն՝ անկեղծ յորդորանք մը, հոս՝ լուրջ յանձնարարութիւն մը, սաղին, տղայոց՝ հայրադորով խրատ մը, անդին՝ քաղցր յանդիմանութիւն մը, վերջապէս մէկ խօսքով ամէն կողմ ոգեւորութիւն կը սփռէր, արծարծելով աշխատութեան եռանդը ամէն աշխատաւորին ներսիդին:

Շուրջս տիրող եռուղեւը ղիս սթափեցնելով, վերյուշումը տուաւ այն փափաքիս՝ զոր ունեցայ նորակառոյց Հիւանդանոցին ներքին մասը տեսնելու համար:

Տնորէն էֆ.ի արտօնութեամբ և դրասենեակի գրագիրներէն՝ Պ. Գասպարի տաաջնորդութեամբ այցելեցինք աւարտած շէնքը. արդարեւ գեղեցիկ էր իր նուրբ և նորածե շինուածքովը. տարակոյս չկայ որ աւելի գեղեցիկ պիտի ըլլար, եթէ խզճմտօրէն աշխատութիւնները չի ղլացուէին:

Ի տես այս նոր և ազւոր շէնքին (նոգ չէ թէ խարխուլ ըլլայ այն), դադափառներու ղուգորդութեամբ, միտքս ինկաւ Մաղիկի այն թիւը՝ որուն մէջ ուրախութեամբ կը ծանուցուէր Անգլիացի Nurse-երու գալուստը, նորաչէն հիւանդանոցին համար. հարկաւ, նոր շէնք, նոր մարդիկ՝ սակայն անուրախ և գնահատելի են Պատ. Հոգաբարձութեան ջանքերը, որոնցմով միջոցներ կը ստեղծէ ան՝ Հիւանդանոցը նախանձելի դիրքի մը մէջ դնելու համար. դադափարը խիստ վսեմ, իսկ իրականութիւնը... յուսահատեցուցիչ և այսպանելի միանգամայն մեզ, աղջիկներուս համար. ցաւ յայտնեցի որ, ասանկ Ազգ. հաստատութեան մը մէջ, օտարուհիներ պիտի գան, անոնք պիտի գործեն ու մենք պիտի փառաւորուինք անոնցմով. իրաւունք չունէի՝ արդեօք ցաւելու այս խիստ կարեւոր պակասին վրայ: Ո՛ւր են մեր ֆէմինիստ աղջիկները, ո՛ւր տեղուանք կը յածին իրենց միտքերը, ֆէմինիզմ կը պոռան, ֆէմինիզմ կը կանչուըւտեն. չեմ գիտեր որ ի՞նչ կերպով ֆէմինիստ պիտի ըլլանք, այր մարդոց պէս քալելով, թէ ո՛չ՝ անոնց բանդալոնը և բաճկոնը հագնելով. տխուր բան: Մինչ մենք ասդին ապուշաբար ֆէմինիզմի պայքարը կը մղենք, անդին, օտարուհիներ, կ'աշխատին յուշիկ, ու, ճշմարիտ ֆէմինիստներ, կուգան դործել մեր բոլոր հաստատութեանց մէջ, բան մը՝ որ անուղղակի կերպով, մեղի՛ մեր անխուժութիւնը և ունայնամտութիւնը ղգացնել է, սակայն մենք վրանխ չենք առներ, ու կը շարունակենք պայքարիլ, ի զո՛ւր:

Ո՛ւր են մեր հիւանդապահուհիները. ո՛ւր այդ դտաւնթացքի հետեւողները: Այո՛, մոռցայ, մէկ քանի հատ կ'երեւին Հիւանդանոցին մէջ, որոնք տակաւին նոր են ու չենք գիտեր ինչ ըլլալնին:

## ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Պաղտարները ճանչնալու պատիւը չէք ունեցած :

Կը վստահացնեմ ձեզի որ զբկանք մըն է ատիկա ձեզի համար : Թերեւս, չեմ պնդեր, անձերնին կը ճանչնաք, բայց անուննին... երբե՛ք :

Վասն զի դեռ ամիս մը չընէր որ այդ մականունով մկրտուած են : Տոհմային կեդեափոխութեան զո՛ւ մըն են իրենք, առաջ Պաղտիկեան կը կոչուէին, հիմակ... Պաղտարները :

Խաչատուր էֆէնտին եղած է Mr. Hatchdoor, (Mr. Hatchdoor Baghdar, ալուոր է, չէ՞. ամերիկացիները նոյնիսկ պիտի դարմանան այս պատուական գիւտին վրայ), իր կինը Եղիստեթ հանրմ... փոխուած է Mme. Eliseի, իսկ միակ զաւակնին, չքնաղն Արուսեակ... Mlle. Vénusի :

Իրեւ հիւր՝ իրենց անունին ծայրը կը ճատող ընտանիքները միայն կ'ընդունին... ան ալ հինգշաբթի օրերը, եւրոպական ժամը եօթէն վերջը (իրիկուան) :

Երբոր հիւր կ'ըսեմ, պէտք է անմիջապէս հասկնալ կիները :

Պաղտարները իրարու ա' յնքան կը յարմարին՝ սրքան ձախ աչքերնուդ դոյնը՝ աջինին :

Իրարու համար ստեղծուած են :

Անգամ մը տունին մէջ երիտասարդ հասառուի մը կողմէ ամուսնութեան խօսք կը բացուի. տղան կը պնդէ որ դրամը ամէն բան է, առանց դրամի ամուսնութիւն չկրնար ըլլալ :

— Ո՛չ, կ'ըսէ Mr. Hatchdoor հարստութիւնը չէ երջանկութիւնը կազմողը :

— Երջանկութիւնը հարստութեան մէջ չի կայանար կ'ըսէ անդիէն Mme. Elise՝ աչքերը քթթեղով :

— Մարդ կրնայ երջանիկ ըլլալ առանց հարուստ ըլլալու, կ'ըսէ ասդիէն Mlle. Vénus, իր շնորհալիութեանը մէջ ճաճանչաղեղ : Երեք լարեր՝ որ միւսնոյն ձայնը կը հանեն :

Եւ որովհետեւ միտքերնին տարբեր էր, բոլորովին տարբեր երիտասարդ հասառուին ունեցածէն, նոյն տարին ուրիշ դիւզ մը օդափոխութեան կ'երթան, փոխանակ անցեալ տարուան պէս Հաւրի երթալու, զոր հրաշալի գտեր էին, և ուր դրամապաշտ հերոսը կը բնակէր :

Ասիկա կը ձգեն, և ուրիշի մը քծնիլ կը սկսին :

Ո՛ւր որ չա՛հ կայ, հո՛ն կը վազեն, և բարեկամ կ'ըլլան միայն



անոնց, որոնք օրին մէկը կրնայ ըլլալ որ նիւթական օգնութիւն մը ընեն իրենց... ձեր միտքէն անցած բոլոր եղանակներով:

Շատ ազուոր աչքեր ունի Օրիորդ... չէ', ներողութիւն, Mlle Vénus: Ամէն տեսակ նուազարան չալել զիտէ: և զիրք կը կարգայ շարունակ որպէս զի իր տունին մէջ երբոր մէկ քանի երիտասարդներ գրախնութեան վրայ խօսին, կարենայ դրադէտ ներու անուններ չարել, դիցազնուհիի քանի մը պատմութիւններ ընել: Դիցազնի անուն տուած չունի, շատ կ'ամչնայ, և տեսնելու է իր դէմքը, որ կը շաւազունի յանկարծ, երբ պատահամբ տղու մը անուն արտասանէ...: Այնքա՛ն ամբիծ է ան՝ իր կոյսի, նարնջածաղիկներով բանուած թովիչ ինքնութեանը մէջ:

Նուազած ասունը չկրնար մարդու երես նայիլ, իր աչքերը դէպի վեր, միշտ դէպի վեր կը սեւեռէ, երկինքին կապոյտ ու փափկանուշ կարօտովը?...

Ամիսը անգամ մը կը հիւանդանայ և այդ հիւանդութիւնը չիւքութիւն իսկ է իրեն համար. անկողինէն ելնելուն ա՛յնքան փափկացած, ա՛յնքան նրբացած կ'ըլլայ որ կը վախնաս հեղ խօսելէ, միտքէդ անցընելով թէ մի' դուցէ չունչէդ փչուի, սորսորի այդ անմարդկային, անհարմիրն էակը որ մարդկային մարմիններուն ամէնէն խոտամալիցը ունենալ կը թուի...

— Ի՞նչ, նորէն տկա՞ր է Mlle Vénus, կը հարցնէ մէկը տունին մտերիմներէն:

— Չէ', կը պատասխանէ մայրը, շարունակ աչքերը քթթելով, բիւրբը վեր վար ընելով, չէ', ընդհակառակը. արծաթեղէնները... կը մաքրէ կոր դուրը, խեղճ աղջիկը ա՛յնքան աշխատեցաւ որ այսօր...:

Բայց խնդիրը իրականութեան մէջ ան է որ տունին մտերիմը միշտ կը տեսնէ այն այլազանութիւնը որ կը տիրէ հրամցուած սուրճին երկու երեք զգաթներուն մէջ...

Եւ խեղճ Vénus կ'աշխատի տակաւին, արծաթեղէնները կը մաքրէ...

Հիմակ Պաղտարները պէտք եղածին պէս թէ՛ անունով և թէ՛ անձով կը ճանչնաք: Ինծի կը մնայ միայն պատմել որ, ի՞նչ պարագաներու տակ վերջապէս Mlle Vénusը երիտասարդի մը գլուխը փաթթեցին, երիտասարդ մը որ répertoireին մէջ գոյութիւն չունէր մինչեւ հիմա, և որուն համար լսած էի որ եօթը անգամ նշանուեր է... Չի հասկնաք որ եօթը անգամ նշանուած ըսածս Mlle Vénus Baghdarն է. քա՛ն լիցի, սնիկա վեց անգամ... խօսեցեալ (ի՞նչ ազեղ բառ, մարդուն նշանուիլը չի

գար) եղած է և վեց անգամն ալ ի՛նք ճախու գրած է իր ապա-  
գայ կէսը ըլլալիքները, մինչդեռ վերջին նշանածը ճի՛շտ ատոր  
հակառակը, աղջիկներու կողմէ... ճամբու գրուած է:

Անանկ կը կարծուի որ ստիկա partie մըն է. սքանչելի զոյգ  
մը պիտի ըլլան տղապային. մինալնին թատրոն կ'երթան, մինակ-  
նին թաղապետական պարտէզները կ'այցեկեն, իրարու համար ըս-  
տեղծուած՝ բայց բաղդին չար կամքովը պատահմամբ զիրար կոր-  
սընցուցած, ու վերստին գտած անձերու կը նմանին. օ՛հ, տեսնե-  
լու բան է, ի՛նչ յոխորտանք, ի՛նչ շարժում կը դնէ Mlle. Venus  
իր քալուածքին, երգուածքին մէջ. որովհետեւ երջանիկ է՝ մար-  
դու բարեւ չի տար, և բոլոր զինքը բարեւողները՝ կը բամբասէ.

—Ա՛հ, ma chère, չէ՛, mon cher, կը տեսնե՞ս, ի՛նչպէս  
վարժուած չեմ mon cher ըսելու, այս ամէն զիս բարեւողներն  
ալ... ձեռքս կը խնդրէին բայց միայն քեզի՛ հաւնեցայ:

—Ո՛րքան երջանիկ եմ, ո՛րքան:

Բայց անկեղծ ըլլալու համար խոստովանիմ որ չա՛տ կամքի  
տէր, չա՛տ աղէկ աղջիկ մըն է նորէն Mlle. Venus Baghdar:

Եթէ այսքան աղէկ չըլլար, ձանձրացեր էր հիմակ իր... մաք-  
րէն. երեւակայեցէ՛ք, տասնընիւկ օրէ որ նշանուած է, և դեռ իր  
նշանածէն յաիրացած ըլլալու ո՛ր է նշան յոյց չի տար:

Նկարագրի տէր ըլլալն ալ ուրիշ բան է:

ՄԱՌԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ

## ՆԻՆԻՒՆ ՕՐԱԳԻՐԸ

ՈՒՐԵԱԹ

Մ՛հ... սա մարդիկը, իրաւ որ անտանելի են, անտանելի: Եթէ  
անանկ չըլլային կը հաւատա՞ք որ Աստուած Աղամին ըսեր  
«Ճակտիդ քրտինքովը հաց կեր»:

Ո՛վ զիտէ նախամարդը որքան սարսափելի ձանձրութիւններ  
տուած է. որ բնութիւնը իր անհուն բարութեամբ՝ չէ հանդուրժեր  
ալ, և ատանկ չարչարանք մը սահմաներ է:

Արդարեւ այդ պատիժը թեթեւ է, եթէ իմ կարծիքս առնուէր  
հիմակ, պիտի ուղէի որ ամէնքն ալ համը ըլլային, առանց բացա-  
ռութեան:

... Խօսելու կարողութիւնը որ անիրաւաբար մարդոց տրուած  
է, բայց ո՛րքան չարաչար կը գործածեն, Աստուած իմ...:



Որովհետեւ խօսիլ գիտեն, անկարելի է որ լռել գիտնան։ Եր-  
ջանիկ՝ մեզմէ հազար անգամ երջանիկ են տա՛ զաշտին չորքոտա-  
նիները, բոլոր օգին թռչունները, և մանաւանդ ձուկերը որոնք  
գիրար մտիկ ընելու դժբաղդութիւնը չունին։

Եւ կը կարծէ՞ք թէ այդքան սիրով պիտի ըլլային եթէ խօսիլ  
կարենային։

Ապահովաբար անոնց մէջն ալ՝ բամբասող էգեր, շատախօս և  
ինքնահաւան արուներ չպիտի պակսէին, ինչպէս մեր մէջ, որոնք  
անտանելիօրէն բազմաթիւ են։

Եթէ վիճակագիրները, պզտիկ նեղութիւն մը յանձն առնելով՝  
փորձէին երկրիս վրայ գտնուող բոլոր միւս ուսող կիներուն՝ և շառ-  
ւաթան էրիկ մարդոց ցուցակը պատրաստել, ապահովաբար թուա-  
նըջանները պիտի չբաւէին, այնքան սարսափեցնող առատութիւն  
մը կայ շատախօսներու։

Սակայն, կիներուն միւս ուսելը, բամբասելը, մասամբ մը տա-  
նելի է։ Գոնէ անոնց աղուոր շրթունքներուն կը վայելէ այդ Փան-  
թէգի խօսուողութեան, բայց էրիկ մարդոց... Մհ... տեղերնիդ  
հանգիստ ըրէ՛ք, կ'աղաչեմ, և մի փորձէ՛ք կիներուն հաւասարիլ  
այդ մասին, որովհետեւ շատ, շատ կը տուժէ՛ք, ու կը կորսնցնէ՛ք  
գերազանցութեան իրաւունքնիդ։

Կիները թո՛ղ օրերով շատախօսեն, ամբողջ ամիսներով թո՛ղ  
միւս ուսեն, արդէն, այդ իսկ է անոնց անձանօթ հրապոյրը, գե-  
րազանց ձիբբը։ Սակայն, երբեք չենք ներեր որ այրերն ալ միեւ-  
նոյն բանը փորձեն։

Շատախօսութիւնը այն գանեցնող ախտն է՝ որ ամէն նկատում  
կը մոռնայ։ Անկէ վարակուողները ամէնուն վրայ խօսելու՝ ամէն  
բանի խառնուելու իրաւունքը կը կարծեն ունենալ, ճիշդ այն ցը-  
նորածներուն պէս, որոնք վայրկեան մը չեն կորսնցներ առանց խօ-  
սելու։

Մհ... շատախօս մը ունկնդրելը... բա՛յց, կոշտերով ծածկը-  
ւած ոտք մը՝ նեղ կոշիկի մը մէջ՝ հազար անգամ աւելի երջանիկ  
է այն մարդէն որ շատախօսի մը հանդիպած է...։

Այդ անտանելիները համաճարակի միջբրոպներուն կը նմանին.  
ամէն տեղ են և տեղ մը չի կայ ուր չղգաս իրենց ներկայութիւնը։

Ա՛լ մտիկ ընելու է, ամէն բանի վրայ կը խօսին, կանացի փե-  
ղոյրէն սկսեալ մինչև աժուռ գուլպաները, ու... փիլիսոփայու-  
թենէն մինչև ատաղձագործութիւնը կը բարձրանան։

Սակարանի գիներուն պէս ելեւէջներով խօսակցութիւն մը որ  
անխուսափելիօրէն գրականութեամբ կը վերջանայ։

Ու եթէ չար բազդէդ գրող մըն ես, հազար ձիւն է եկեր գլխուդ, պէտք է որ մտիկ ընես:

— Բայց այդ ճիւղը չվայլեր որ մշակես, մանաւանդ քեզի, դուն տակաւին երկտառարդ ես, դուն աղջիկ ես, դուն՝ միայն քառեակներով ոտամաւորներ ստորագրելու ես, ոտամաւորներ, որոնք միայն բարեկամութիւններուդ նուիրուած ըլլան:

Ներգիծա՞նք, աղջկան մը գրչին ծափը... Սակայն, դժոխքին հուրերուն կը զրկեն այդ աղջիկը:

Ի՞նչ անբարոյականութիւն, կը մըմնջեն բոլոր շատախօսները: Ներքե՛ք չեններել որ իրենց կարծիքը չստացած տող մը ստորագրես:

— Կը խրատեմ որ չգրես... կ'ըսէ մէկը, և ուրիշ մը կ'աւելցնէ,

— Աղէկ չէ՞ որ յօդուածներովդ բացատրես թէ գուլպաները ի՞նչպէս կը կարկտուին:

— Մտածէ անգամ մը, ատանկ անբարոյական ??? բաներ գրելով, լուրջ անունդ, համեստութեան հաճաւդ կը խորտակես, կը յորդորէ անտանկի շատախօս մը ուրիշ գիւէ մը:

Սակայն, անտանկի էք, անտանկի, մանաւանդ դուք, ո՛վ ինքնակոչ շատախօսներ, որ ձեզմէ խորհուրդ չենք հարցներ:

Եւ այս ինքնակոչ խորհրդատուները, խօսելու, դիտողութիւն ընելու տենդոտութեան մէջ, ամէն բան կը մոռնան, կը մոռնան թէ իրենք ամէնէն աւելի անպարկեշտութիւն կը գործեն, անբարոյական նկատելով այն միամիտ գրուածքները՝ որոնց մէջ Պրքե՛ք ծածկուած նենգութիւններ, երբե՛ք անպարկեշտ մտածումներ չկան, և որոնց անպարկեշտութիւնը միմիայն անկեղծութիւնն է:

Անկեղծութիւնը որ արեւին աշխարհքը իջած օրէն ի վեր անհարազատ զաւակ մը նկատուած է, ոչ ոք կ'ընդունի՛ր զայն:

«Եւ սակայն երկիրը կը դառնայ» կալիլէին ըսածին պէս. հետեւաբար, անկարելի է որ բամբաստող կիներ չգտնուին, անհար է որ շատախօսները, անիպականկատները պակսին, ինքնահաւանները կըթուին, վարժուհիները չը նախանձին, և անկարելի է որ ինքնակոչ խրատատուները ըլնեն:

Ն Ի Ն Ի

## ԵՌԱԶԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ

Յառաջիկայ կիրակի օր, Գումգարուի Մայր եկեղեցիին մէջ տեղի պիտի ունենայ եռաձայն պատարագ մը, որուն պիտի մասնակցին հարիւր տասը երկսեւ դպիրներ, առաջնորդութեամբ Մէհտերեան էֆ.ի: Կը լսենք թէ այս եռաձայնի՝ մայրաքաղաքիս զանազան թաղերէն ստուար ընտանիքներ ներկայ պիտի գտնուին, որովհետեւ մեծ յաջողութեան մը յոյսը կը ներշնչէ այժմէն:



Գանք հիմայ խօսիլ բուն Եաֆայի վրայ: Աւելորդ է ըսել թէ Ս. Գրոց մէջ այնքան ծանօթ Յոսպէն է այժմու Եաֆան, զոր տիեզերահռչակ ըրած են իր նարինջները և լիմոնները. մանաւանդ առաջինները՝ որ իր հարստութեան գլխաւոր աղբիւրը կը կազմեն: Հարիւր հազարներով կը համրուին այն անտուկները որոնցմով իր նարինջները կը փոխադրուին ծովերէն անդին մինչև Անգղիա, ուր սոցորաբար հասը 1 շիլինի կը ծախուի:

Եաֆայի հնութիւնը նախապատմական է: Աւանդութիւնը կ'ըսէ թէ Նոյ նահապետը իր տապանը Եաֆայի մէջ շինեց. ըսել է ջրհեղեղէն առաջ կար: Իսկ Յովեան մարգարէին այս քաղքի նաւահանգիստէն նաւ նստիլը և Աստուծոյ երեսէն փախչիլ ուղիւը չգիտցող չկայ, բաւական է որ մարդ փոքր ինչ ծանօթութիւն ունենայ Ս. Գրոց պատմութեանը վրայ:

Սողոմոնի ժամանակներէն ի վեր ծաղկեալ նաւահանգիստ մը նացած է Յոսպէ իբրև գլխաւոր դուռը Պաղեստինի: Տաճարին շինութեանը համար Լիբանանու լեռներէն կտրուած մայրիներ և ուրիշ փայտերը այս նաւահանգիստ բերուեցան ծովէն լաստերով՝ և անկէց Ս. Քաղաքը փոխադրուեցան ահադին դժուարութեամբ և ծախքերով Սողոմոնի ատենը: Այժմ ալ շոգենաւներ անպակաս են իր առջեւը՝ ապրանք ներածելու և արտածելու համար ու բնակչութիւնը խիստ բազմազան է: Երեւելի շէնքերը չատ են, որոնց կարգին Հայոց վանքին պատկանողները աչքառու տեղ մը կը բռնեն:

Բայց Եաֆայի ամենամեծ գեղեցկութիւնը իր պարտէզներն են ամենաղգի պտուղներով, մանաւանդ նարնջներէնով, զորս տեսնել և չհիանալ անկարելի է: Հողին քարերեքութեան խօսք չըլլար: Ատոր համար բաղմաթիւ Գերման գաղթականներ հաստատուած են իր շուրջը, որոնք ոչ սակաւ կը նպաստեն անոր բարգաւաճմանը: Հայոց թիւը Եաֆայի մէջ հազիւ 100ը կ'անցնի այր և կին, ծեր ու տղայ:

Եաֆայէն Երուսաղէմ երթալու համար երկու ճամբայ կայ. հին և նոր: Հին ճամբան ան է որ կը բանէր երկաթուղիին հաստատուելէն առաջ, նորը երկաթուղիին ճամբան իսկ է: Աւելորդ է փաստել նոր ճամբուն գերազանց առաւելութիւնը հնոյն վրայ: Բայց տեղացիներու մեծամասնութիւնը տակաւին հինը կը նախընտրէ աժանութեանը համար, այս կողմի բնիկներուն անծանօթ ըլլալով ժամանակին յարդը, բաւական է թէ աժան ըլլայ ճամբորդութիւնը:

Իսկ մենք ընտկան է թէ երկաթուղին ընտրեցինք, փոխանակ հին ճամբուն՝ որ առնուազն 1/4 ժամ կը պահանջէ ուղտով, ձիով կամ էշով: Իմ առաջին ուխտագնացութեանս ասեմք՝ երկաթուղին դեռ չինուած չըլլալով, Եաֆայէն Երուսաղէմ գացեր էինք ուղտ հեծած: Եւ մարդու կենաց մէջ ուրիշ անգամ առիթ չներկայանար ուղտով ճամբորդելու, որ թէև ունի իր զուարճալի կողմերը, բայց ուղտին դանդաղաքայլ և օրօրուող ընթացքը տաղտկալի է ու կը քանդէ հեծնողին ողնայար սիւնը:

Տարակոյս չկար որ այս երկրորդ ուխտագնացութեանս երկաթուղին պէտք էր նախընտրել, ինչպէս կ'առաջարկէր ամուսինս ալ և կը փափաքէին դաւաներս: Արդէն երկաթուղին կ'ընտրեն Եաֆայի և Երուսաղէմի բոլոր վաճառականները, բարեկեցիկ ու քաղաքակրթուած դասակարգերը, օտարազգի ճամբորդները, զբօսաշրջիկները և ուխտաւորները: Բացառութիւն կը կազմեն Ռուս ուխտաւորներուն չափազանց ջերմեանդ մասը որ յատկապէս ոտքով կ'ուղեն քալել իբր ապաշխարութիւն՝ Ֆրիստոսի սուրբ դերձմանին երկրպագութեան արժանի ըլլալու համար: Խնայասիրութիւն կամ կարօտութիւնը չէ ատոր պատճառը: Ատոնցմէ շատերը հազարաւոր բուքիներ կ'ունենան հետեմին որ նուէր կուտան սուրբ տեղեաց վանքերուն և եկեղեցիներուն:

Երկաթուղիի կայարանը եօթը վայրկեան հեռու է Եաֆայէն. կառքով հոն գացինք, և չոգեկառքը նստանք ցորեկին: Երկաթուղին շատ նեղ գիծով է: Դանգաղ կ'ընթանայ ճամբան՝ խոր դուրորդ և զիկզակ ոլորտուն ըլլալուն համար: Ատոր համար թէև միայն 87 քիլոմէթր է ճամբուն երկարութիւնը, բայց 3 ու կէս ժամէն միայն կրցաւ կտրել այդ փոքրիկ անջրպետը: Յուդայաստանի լեռանցամէջերէն, ձորերէն ու բլուրներէն, դարեաններէն ու սարաւանդներէն անցած ատեն վախ մը կուգար վրանիս թէ մի գոցէ գահավիժի: Մանաւանդ գծերուն նեղութիւնը շատ լուրջ կասկած կուտայ ճամբորդին: Հինդ տեղ կանգ առաւ մեր չոգեկառքը և արդէն Եաֆայէ Երուսաղէմ կայ հինգ կայարան, որոնք են Լիզդէ, Ռէմէ, Սէճէտ, Տիրապան և Պէթթիր:

Ոչ նկարագրութեամբ և ոչ երեւակայութեամբ կարելի չըլլար ընթերցողին գաղափար կազմել ճամբուն գեղեցկութեանը վրայ Եաֆայէն Երուսաղէմ, գեղեցկութիւն ընտկան և արուեստական՝ խառնուած կրօնական և եկեղեցական յիշատակներով, որոնք ուղեւորին հոգին կը յուզեն աւելի քան աշխարհի վրայ որ և է ճամբորդութեան առիւն: Նախ սա ըսեմ թէ Եաֆայէն մեկնելուն պէս՝ երկաթուղին ամբողջ 2 քիլոմէթր նարնջենիներու և լեւոնիներու պարտէզներէ անցաւ, որոնց կը խառնուին նաև նունենիներ



և երբեմն նաև արմաւենիներ։ Այսպիսի տեսարան մը ոչ ոք երբ տեսած էինք մեր բովանդակ կենաց մէջ։ Իսկ բոլոր ճամբուն երկայնքը ձիթենիներուն հաշիւ չկայ, թող ուրիշ բաղմաղդի ծառերը։

Այլ որովհետեւ մեր միտքը վայրկեան մ'առաջ Ս. Քաղաքը հասնիլ էր, ճամբուն տեսարաններէն շատ չէինք հրապուրուեր։ 82րդ քիլոմետրին վրայ երևցաւ Երուսաղէմ։ Հոգեկան յուզում մըն էր տիրեց վրանիս։ Յիշեցինք անփշապէս Սաղմոսի «Եթէ մուսացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի զիս Աստուած իմ» խօսքը և Յիսուսի՝ հառաչանօք գոչելը՝ «Երուսաղէմ, Երուսաղէմ»։ Երեսնիս խաչակնքեցինք յուզումնալից, գետին իյնալով երկիրպաղուծիւն պիտի ընէինք ինչպէս կ'ընեն բոլոր այն ուխտաւորները որ երկաթուղիով չեն ճամբորդեր։ Բայց մենք՝ վակոնի մէջ էինք որ չէր կենար։ Ծիշդ Յ ու կէս ժամ լրանալուն Երուսաղէմի կայարանը կանգ առաւ երկաթուղին։

Կայարանէն մինչեւ Ս. Քաղաքը տեւեց աւելի քան 6 վայրկեան։ Անցանք գետնի ձորէն և Եաֆայի կամ Պապ էլ իջալի կոչուած դռնէն մտանք Երուսաղէմ։ Զուգեցինք Հայոց վանքը իջնել, և օթէլ մը իջեւանեցանք աւելի հանդիստ ըլլալու համար։ Բայց մեր զգացած առաջին տպաւորութիւնն եղաւ խորին հիացում ու հպարտ ուրախութիւն մը՝ ի տես այն հոյակապ շէնքերուն և կայունածներուն՝ որոնք աւելի չքեղ ու փառաւոր, աւելի բազմաթիւ ու հասութաբեր քան Եաֆա՝ կը կանգնին Երուսաղէմի մէջ և կը վերաբերին մեր (Հայոց) վանքին, չինուած ամէնքն սլ վերջին 10-15 տարուան մէջ։

ՏԻԿԻՆ ՓԱՓԱԶԵԱՆ

## ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԵՒՆ

Նախընթաց կիրակի, Հիսար Տիպի Զարպանէլեան բնակարանին մէջ տեղի ունեցաւ Տիար Մկրտիչ Փափազեանի նշանախօսութիւնը Օր. Իսկուհի Զարպանէլեանի հետ, որ եղբորաղջիկն է Տիկին Աննա Սմբատեանի, և օժտուած աղնիւ ձիրքերով։

Սիւնկէրի դեղարուեստական չորրորդ ցուցանուէսը բացուած է Բերայի ընդհ. անօրինութեան սրահներուն մէջ, Պօս Մառչէի դիմաց։ Յուցանուէսը ամէն օր բաց է և մուտքը ազատ։

## ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՆՃԱՐ

Ընտանիքի մը համար կարեւոր եղող զիտելիքներէն մէկն ալ հաշիւն է որուն իւրացումը կրնայ շատ մեծ օգուտներ առաջ բերել ընտանեկան յարկի մը մէջ, ուր ամէն ինչ հաշիւով պէտք է ընթանայ:

Մեր դեռատի ընթերցողներն ու ընթերցողները վարժեցնելու համար հաշիւի, յարմար դատեցիք:

## ՀԱՇՈՒԱԿԱՆ ՀԱՆՃԱՐ

Խորազրով բաժին մը բանալ Ծաղիկի մէջ, անոնց սրտմտութեամբը լուծող հաշուական հարցումներ հրատարակելով, որոնց պատասխանելու համար անշուշտ, անոնց իւրաքանչիւրը ամէն ճիշդ պիտի թափէ, երբ ըսենք մանաւանդ թէ ծայրը շահ մըն ալ կայ իրենց համար:

Այս բաժինին խմբադրութիւնը ստանձնող օրիորդը, որ քաջ հաշուադէտ մըն է, հետեւեալը ղրկած է այս անգամ.

Հարցում Ա.

51926

Մէկին բան մը չի տալով, ու մնացածներուն ոչինչ տալով, ինչպէս կրնանք երեւան բերել ծաղիկ մը:

Լուծումները կ'ընդունուին մինչեւ յառաջիկայ երեքշաբթի իրիկուն: Առաջին անգամ լուծող օրիորդը կամ պարոնը կը ստանայ 3 ամսուան Ծաղիկ:

## ՖՐԱՆՍԵՐԷՆԻ ԴՍՍԵՐ ԴԻԻՐԱՄՍՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

Ֆրանսերէնի հմուտ անձ մը արամադրելի ժամեր ունի ֆրանսերէնի դասեր աւանդելու ամէն անոնց որոնք կը փափաքին կարճ ժամանակի մէջ սորվիլ ֆրանսերէնի պէս կարեւոր ու տիեզերական լեզու մը: Պայմանները խիստ ղիւրամատչելի են և զատախօսութեան եղանակը՝ շատ ղիւրին: Դիմել «Արեւելք» լրագրի խմբադրաստունը:

10—1



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ ղգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

## Ս Ի Ն Կ Է Ր

Հայրայրից ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ The Singer Manufacturing Co  
մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

- |        |   |                                                   |
|--------|---|---------------------------------------------------|
| ԲԵՐԱ   | { | 1. Մեծ փողոց. Պօն Մառշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
|        |   | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.           |
| ԿԱԼԱԹԱ | { | 1. Սինկեր խան, Թիւնէյին ետեւը.                    |
|        |   | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.             |
| ՊՈԼԻՍ  | { | 1. Սուլթան Համամ, Թ. 2                            |
|        |   | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13 |
| ՍԿԻՍԱՐ |   | Չարշը Պօլու, Թ. 120.                              |

## ՇՐԲԱՅԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

12—50

## Գ Ր Ա Տ Ո Ւ Ն

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԸԼԸՃԵԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌ—ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ուղղամտութիւն, Բիշով գոհացում

ԳԸԼԸՃԵԱՆ Գրատունը իր գրեական ճօխ մթերքով Մէարի. ֆէն արտօնուած Օսմ., Հալեքէն, Պրանս., Անգղ. եւ Գերմ. դասա. քերքերու յանձնարարութիւններ կը կատարէ փութով խնամով եւ դիւրամատչելի պայմաններով: Գրատանս սկզբունքն է յաճախորդին շահուն մէջ փնտռել իր արդար չահը: Իր գտած համակրութեան ապացոյցն է իր ուղղամիտ յաճախորդներուն հետզհետէ ա. ճող մեծ թիւը: Փորձ մը միայն կը բաւէ համոզուելու գրատան ճշդապահ եւ ուղղամիտ գործառնութեանց մասին: Հասցէ.

Գրատուն Յովհաննէս Գըլըճեան, Մեծ Նոր-խան, Կ. Պոլիս

50—1

## ԳԼԽԱՐԿԱՎԱՋԱՌ ՄԵՍՏՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մէտեմեան վաճառատունը որ ասկէջ առաջ Պօն Մառէ վաճառատան քով կը գտնուէր և երկու ամիսէ ի վեր այրած էր, այս անգամ փոխադրուած է Բերա, Մեծ Փողոց, Օ Լիօն վաճառատան քով, Սմայտեան Արարթրմանին առաջին յարկը, ուր բոտ առաջնոյն, վերջին նորաձեւութեան համաձայն, կը վաճառէ կանանց յատուկ գլխարկներ, և գլխարկի վերաբերեալ ամէն տեսակ զարդեր, Եւրոպայէն դեռ նոր հասած յը ճոխ միներքով։ 3—30

## ՄՕԶԱՅԻԳ ՎԷ ԱԼԶԸ ԻՄԱԼԸՆԱ ՄԱԽՍՈՒՍ ՊԷՕՅԻԻՔ ՖԱՊՐԻԳԱ ՎԷ ԷՏԷՎԱԹԸ ԻՆՇԱԻՅԻԷ ՄԱՂԱԶԱՍԸ ՀԱՃԻ ՊԱՂՏԱՍԱՐ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆ ՎԷ ՄԱԽՏՈՒՄԼԱՐԸ

Ապամ Գաբու ճատտեսինտէ Թուղլամըլարտա Թիւրպէի Շէրիֆի մուքթասըլ Նօ. 510 վէ Կալարատա Բէրլէմպէ մագարընտա Եօրկանըլար իջէրիսինտէ Նօ. 2

Սօն սխմէմտէ պուխարու քիւշատ իթմիշ օլտուղումուղ Ֆապրիգամըլտա, Էվրօրատան ճէլպ իթմիշ օլտուղումուղ ուտալար վասթասը իլէ իմալ իթմէքտէ պուլունտուղումըլ Հէր նէվ մօղայիգ-Չինի վէ մօղայիք-մալթա, նէրտիվէն պասամըլ, Ֆասատ իւշուն սիման արմէ ուսուլի իւզրէ գապլամա, բուտրէլ արասընա վօլթօ, տիվար իւթիւնէ քիւբէլթէ, վարմաքըլդ, պապա վէ սաքսըլարըն էնվալի քատէմ խանէ վէ մուսուլք վէ թէքնէ թաշլարը՝ զարը իլէ պէրապէր, հավուղ իշուն Ֆիսկէ, վէ փէնճէրէ տապանլարը վէ սայիթէնին մէթանէթի, էհլի Ֆէն վէ միյմար վէ միւս հէնտիս էֆէնտիլէր թարաֆընտան թաստիգ օլունտուղու կիպի, Ֆապրիգամըլ վէ մազազամըլ թարաֆընտան տախի թէէմին իտիլմէքտէ տիր, Հէր տիւրիւ մօղայիք իւզէրինէ սիփարըլ ալընրպազ միւտտէթ զարֆընտա թէսլիմ օլունտուղու կիպի, ինշաաթա այիտ քիւբէմիտ, ալշը, չօյիտրօյիք, մէրմէր վէ Մարսիլիա թաշլարը էնվալի թիւրիւ չուվալ չիւէնթօլարը, էգճիւմէ պիրինճի նէվ քարազուշ մարգալը Լօնտոն չիւէնթօլ տախի էնվէն Ֆիաթլա մաղազամըլտա Ֆիրուսիթ օլունուր, Մաղազամըլտան իշթիրա օլունան մալլէրի բէք էհվէն պիր իւճրէթլէ մահալինէ կէօնտէր-մէքտէ օլտուղումըլ տախի այրընա իւան իտէրիլ։

Թաշրա սըփարըշաթըլ տախի քէմալը իշթիմամ վէ սիւրաթլէ իճրա իտիլիր։ 4—50